ԱՐՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԳՈՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ԵԲՐԱՅԵՑԻՍ 9.12-14

*12 և ոչ էլ նոխազների ու զվարակների արյունով, այլ **<u>իր իսկ (սեփական) արյամբ</u>** մեկ անգամ այն սրբարանը մտավ ու հավիտենական փրկություն ստացավ: 13 Որովհետև եթե ցուլերի, նոխազների արյունը և երինջների մոխիրը շաղ տալով՝ մաքրում են պղծվածների մարմինը, 14 որչա՞փ ևս առավել Քրիստոսի արյունը, որ **հավիտենական Հոգով <u>ինքն իրեն</u>** անարատ զոհ մատուցեց Աստծուն, կմաքրի ձեր խղճմտանքը այն մահացու գործերից, որպեսզի կենդանի Աստծուն պաշտեք:*

իր իսկ (սեփական) արյամբ

հավիտենական Հոգով

I. ԱՐՅՈՒՆԸ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԳԻՆՆ Է.

որովհետև մարմնի կենդանությունն իր արյան մեջ է... որովհետև արյունն է, որ քավություն է անում <u>իր մեջ եղած հոգով</u> (Ղև. 17.11):

- *Այս խոսքը բացում է Աստվածաշնչի ամենահիմնավոր և խորհրդավոր ճշմարտություններից մեկը՝ **արյան, կյանքի և հոգու միջև աստվածային կապի մասին**:*

ՈՉ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՄԲ ԱՐՅՈՒՆ

1) ՄԱՐԻԱՄԻ ԱՐՅՈՒՆԸ ՉԵՆՔ ՏԵՍՆՈՒՄ ՀԻՍՈՒՍԻ ԱՐՅԱՆ ՄԵՋ

Հրեշտակը պատասխանեց նրան. <u>Սուրբ Հոգին կգա քեզ վրա</u>, և Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ, դրա համար քեզնից ծնվողն էլ սուրբ է և Աստծու Որդի կկոչվի (Ղուկ. 1.35):

1 Հով. 5.6-8 - 6 Սա է որ եկավ ջրով եւ արյունով՝ Հիսուս Քրիստոսը. ոչ թէ միայն ջրով, բայց ջրով եւ արյունով. եւ Հոգին է վկայողը. որովհետեւ Հոգին է ճշմարտությունը: 7 Որովհետեւ երեք են որ [երկնքումը վկայում են, Հայրը եւ Բանը եւ Սուրբ Հոգին. եւ այս երեքը մի են: 8 Եւ երեք են որ երկրումը] վկայում են. Հոգին, եւ ջուրը, եւ արիւնը. եւ այս երեքը միաբան են:

ԱՐՅԱՆ ԵՎ ՀՈԳՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Արյունը *ներկայացնում է Քրիստոսի զոհը և քավությունը մեղքից:*

Հոգին *ներկայացնում է Նրա ներկայությունը, զորությունն ու վկայությունը մեր ներսում:*

Արյունը *քավում է մեղքերը*
Հոգին *փոխում է բնույթը և կյանքը*

Արյունը *սրբում է մեր խշմտանքը*
Հոգին *կոտրում է մեղքի զորությունը*

Արյունը *մարդուն հաշտեցնում է Աստծո հետ*
Հոգին *մեզ որդեգրում է որպես զավակ*

Արյունը հիմքն է փրկության
Հոգին աշխատում է անհատաբար, հավատքի միջոցով

II. ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐՅԱՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1) Զատիկի Արյունը (Ելից 12.13)

*Եւ արյունը ձեզ համար նշան լինի ձեր եղած տների վրա, **եւ երբոր արյունը տեսնեմ**, ձեր վրայից պիտի անցնեմ:*

- *Արյունը դռան շեմին պաշտպանում էր ընտանիքը մահից:*
- *Արյունը միակ **փրկության միջոցն էր**:*

  Մեր Զատիկը՝ Քրիստոսը, մեզ համար մորթվեց (1 Կոր. 5.7):

2) Բորոտի Մաքվելը (Ղևտ. 14.14–17)

- *Արյուն էր քսվում մաքրված բորոտի՝ **ականջին, բութ մատին և ոտքի մատին**:*
- *Սա խորհրդանշում էր՝ լսելու վերականգնում, **գործելու զորություն**, **ուղղության** փոփոխություն:*

  *Հիսուսի արյունը ոչ միայն ներում է, այլ **վերականգնում է կյանքը ամեն ոլորտում**:*

III. ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐՅՈՒՆԸ ԱՅՍՕՐ ԷԼ ԳՈՐԾՈՒՄ Է

...որ ավելի լավ է խօսում քան թէ Աբէլի արյունը (Եբր. 12:24):

1) *Արյունը «խոսում է» իսկ Հոգին «վկայում է»:*

- *Այո՛, Հիսուսի արյունը խոսում է, և այդ խոսքը ոչ թե դատապարտություն է, այլ՝ **ողորմություն**, **ներում**, **փրկություն**, և **հավիտենական կյանքի խոստում**:*

  Հոգին և արյունը միասին հաստատում են, որ Հիսուս Քրիստոսն է Փրկիչը:

  առանց արյուն թափելու թողություն չի լինում (Եբր. 9:22):

2) *Արյունը պատմական փաստ է՝ խաչի վրա:*

   Քանի՞ փաստ կա Հիսուսի մասին Թուրինի վրա (Shroud of Turin):

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ